

10341

89

286

891.99  
h 89

286

**БЕРЕГИТЕ КНИГУ!**

ОНА СЛУЖИТ НЕ ОДНОМУ, А МНОГИМ.

Возвращайте книгу в  
срок, чтобы и другие  
могли воспользоваться  
ею.

16/IV  
286





48

Дозволено цензурою, Тифлисъ, 8-го Юля 1898 года.

2003



# Ի Ր Ա Ն Ա

Արշալոյսին դուրս եկանք քաղաքից: Պիտի գնալինք մերձակայ աւանը, ուր բնակւած էին հեծեղազօրներս իմ նպատակն էր քարացած սիրտս քիչ փափկացնել բնութեան գրկում, գիւղաքաղաքի չքնադագեղ չրջակայքում: Աչքերս վաղուց էին չորացած. ես անընկճելի տենչանքով դիմում էի ամեն մի միջոցի, որպէս զի կարողանամ նորից ստեղծել այնտեղ մի քանի կաթիլ: Սիրտն առանց արցունքի չատ չուտ է այրւում. որպէս չորացած փայտը բռնկում է եւ չուտով մոխրակոյտ թողնում իր տեղն, այնպէս էլ անարցունք սիրտն է մորմոքւում ու հանգչում: Ով արցունք ունի աչքերում, նա ցաւը երկուսի է բաժանած, ուրեմն սիրտը մենակ չէ կրում այն բոլորն, ինչ որ առանց արցունքի պարտաւոր է տանելու, այժմ նա օգնական ունի, եւ այն էլ գօրաւոր, սրբազան մի ընկեր, որի տակ չատ անգամ կրկին է նիւհում դարձնած վիշտը եւ դադարում է իր օձային գալարումները չարունակելուց հոգու խորքերում, որոնց հարւածներով մաշում է եւ՝ սիրտը եւ՝ ուզեղը՝ հասցնելով մարդուն խելագարութեան կամ գերեզմանի: Այն օրից սկսած, երբ հեռացայ իմ պաշտելի առարկայից, այն էակից, ու



րից մինչև. վերջը ոչ մի խօսք չլսեցի, որ երբեմն մի հայեացքով յոյս էր տալիս եւ միւսով կործանում, աշխատում էի ամեն կերպ նրան մոռանալ, եւ եթէ կարելի լինի, սիրել մի ուրիշին, որպէս զի մի օր զգամ, որ այլ եւս մենակ չեմ... Մենակութիւն... Ահա մի լուսափայլ հրեշտակ... Ահա մի մտայլ գեւ... Որքան երանելի ես, զգալով, որ հետեւ ես այն շրջանից, որտեղից անտարբերութեան, անզգայութեան հոտ է փչում, եւ մտքերիդ ազատ օրէն հետեւում ես, կառավարում նրանց առանց խանգարելու— Հրեշտակ մենակութիւն... Որքա՛ն խղճաւի ես, զգալով որ քեզ ոչ ոք չէ հասկանում, մինչեւ իսկ ինքզ ուրիշներին. ո՞վ գիտէ, վրազ ծիծաղո՞ւմ են, թէ՞ համակրանք ես վայելում. խօսքերին անկարելի է հաւատ ընծայել, թէկուզ նրանք երկնքից լինեն իջած, բաւական է, որ մարդու բերանից են բլղխում. մէկի գովքը ծաղր չը պիտի՞ ընդունել կամ շողոքորթութիւն եւ վերջապէս անկարող եւ երկուանայ, մենակ եւ ծնել, մենակ էլ պիտի պառկես հողի ձեղքւածքում— Դեւ մենակութիւն... Երբեմն կարծում ես, թէ արդէն գտել ես նրան, որին փնտրում էիր սգի օրերից հրճանքի փոխելու համար. բայց այդ այն երազներից է, որոնց իրագործումը միայն մտքի մէջ է կատարւում, որոնցով միայն մտաւոր աշխարհն է զբաղւում, սակայն վերջը մնում է նրանց տեղը դատարկութիւն եւ աւեր, իբրեւ զուտ իրականութիւն:

Ես ցանկանում էի մոռանալ երազներին ասուածուհուն եւ տառապում էի, բայց արցունքից զրկւած աչերս օգնութեան չէին գալիս դժբախտ հոգուս, եւ նա այրում էր մի ահուելի կրակով, Տեսնելով, որ անկարելի է ձեռները ծալած ազատուել գիշատիչ մտքերից, զիմեցի

զբօսանքների ազդեցութեան՝ մոռանելով, որ գուցէ այլպիսով կարելի լինի հանել նախկին կորած հանգստի շէմքին, անհոգ մանկութեան զոխացուցիչ սուերին: Այդ ժամանակ ես սիրում էի իւրաքանչիւր մենացած ժայռ՝ նրան համարելով ենթակայ նոյն ցաւերին, որոնցով պապակւում էի, իւրաքանչիւր վտակ՝ համարելով նրան ներկայից դժգոհ ինձ նման, բայց եւ ցանկալին չ՛գանող, իւրաքանչիւր թուփ ու ծաղիկ՝ խղճալով նրանց, որ դեռ նոր սկսած կեանքի մանուկ շրջանը՝ պիտի մի չարաբախտ օր զո՞հ գնան կարկտի հարւածներին, եւ նենգաւոր քամին պիտի խաղալիք դարձնէ նրանց ամեն մի ատամը: Մենակ էի, բայց եւ շուրջս կատարեալ մենակութիւն էր տիրում:

Գնում էինք շքեղազարդ լեռների ստորոտով, որտեղ ինքնիշխան կերպով բազմել էր գարունը: Դիմացիս ժայռը յանկաւած յիջեցրեց ինձ այն երկիրն, ուր այնքա՛ն տանջւել էի լուսութեան մէջ, եւ մի անհասկանալի կսկիծ մտաւ սիրտս ու սկսեց նեղացնել ինձ: Ես բաժանուցի ընկերներին եւ սկսեցի մենակ վեր բարձրանալ զարդարած ժայռերով: Երբեմն նստում էի թփերի տակ, մանուշակների, այդ շքեղ, բայց դժբախտ արարածների մօտ, եւ հիանում նրանցով: Նրանք նոյնքան խղճալի էին թուում ինձ, որքան մարդը, գուցէ մինչևեւ իսկ էլ աւելի. մտածում էի, որ շուտով կամ մի մարդկային աւերող ձեռք վերջ կ'տայ նրանց կարճատեւ կեանքին, կամ արեւը կը թափէ զմայլեցուցիչ թերթիկները եւ փոշի կը դարձնէ անողորմաբար: Ոչ ոք ոչնչի չի խնայում, ամենքն ունեն իրանց սարսափելի գլարձութիւնը. կեանքը գողութեան կոխ է եւ ստոր կոխ, զրկանքի, ոչնչացման կոխ: Մէկը, որ իր կեանքն այնքան թանկ է գնա-



հատում, ուրիշինը խլելը համարում է մի չնչին, ուշա-  
դրութեան անարժան զէպք. էգօխտ է աշխարհը, անուղ-  
ղելի էգօխտ...

Արեւը բաւական բարձրացել էր: Մի վերին աստի-  
ճանի դուրեկան բարակ քամի շոյում էր շրջակայքը եւ  
զգալ տալիս ինձ, որ մարդն էլ ունի որքան եւ իցէ եր-  
ջանկութիւն, որ նա երբեմն կարող է վայելել աստուա-  
ծային հրաշալիքներ առանց վնասելու նրանց, որ նրան  
եւս բաժին է լինում օդային գովարար խաղից: Այս էլ  
բաւական էի համարում: Ես նստեցի թփի տակ քարի  
վրայ: Քամին իր հետ բերելով մի դիւթիչ ձայն՝ հասց-  
րեց ականջիս: Ես կնոջ երգ էի լսում պարզ կերպով:  
Ուշադրութիւնս լարեցի եւ լսեցի հետեւեալը:

I.

Մի՛ արտասուէք թշա՛ռ աչեր,  
Ինձ անբախտ մի՛ դարձնէք.  
Վախենում եմ—կը գան ժամեր,  
Ինձ արեան մէջ կը զցէք:

II.

Օյս մի՞նեց անժամանակ,  
Վրայ հասաւ գիշերը...  
Ինչո՞ւ դարձայ ծաղր ու ծանակ,  
Ինչո՞ւ կորաւ իմ սէրը...

III.

Այ եւ իջաւ փողփողալով  
Ծովի ծայրը եւ կորաւ,

Սիրաս լցեց մութ արիւնով,  
Անբախտ կեանքիս գերջ զրաւ:

IV

Ծովի իորքում նաւս մնաց,  
Անտէր եմ, անտիրական,  
Սրտիս խորքում ցաւս մնաց,  
Հասայ լսիկ գերեզման...

Որքա՞ն քնքշութիւն, որքա՞ն պարզութիւն էր եւ-  
րեւում այդ հոգեբուզիս հնչիւնների մէջ, որպիսի՛ ներ-  
գաշնակութեամբ բոլոր գեղեցկութիւնները միացել էին  
նրանց հետ, ես զմայելի էի կատարելագտէս: Երգը զաղա-  
րեց: Նա գալիս էր վերեւից. սկսեցի շտապով վեր բար-  
ձրանալ: Ժայռի վրայ նստած էր մի թրքուհի՛ գլուխը  
բաց բազկին յենած: Նրա աչքերը վառուում էին անհան-  
գիստ կրակով, եւ կախարղութիւնը խաղում էր նրանց  
մէջ. արեւելքի բոլոր հրապոյրը ներփակում էր նա իր  
վտանգաւոր հայեացքում, որով կարող էր հարուածել ա-  
մենաամուր կեանքին, եթէ ցանկանար. երջանիկ արա-  
բած!... Նա վեր կացաւ տեղից ինձ տեսնելուն պէս: Մազի  
երկայն հիւսերը ցած էին իջնում բարակ մէջքից մինչեւ  
փոքրիկ ոտները, եւ ծածկւած կուրծքն անդադար  
եղեւէջ էր անում յուզմունքից: Մի ակներով հիւսած  
զիազէմա զարդարում էր նրա գլուխը, շոշոռալով ճա-  
ռագայթներից, եւ աջ բազուկը փաթաթւած էր մար-  
գարտի մի երկայն շարեածքով: Նա աննման էր այդ գիրքի  
մէջ: Անկարող էի չզգալ մի ինչ որ հին, ոչ օտարտօի,  
բայց աւելի գօրեղ ցնցում, չճնդունել ինձ առաջարկող  
գերութեան հրապուրիչ շղթան: Ես գրաււեցի: Թրքու-  
հին նկատելով մօտենալս, արագութեամբ վեր բարձրա-



ցաւ: Ես հետեւեցի նրան: Վերեւում նստած էին մի քանի թուրք օրիորդներ եւ ուշադրութեամբ նայում էին դէպի այն կողմը, որտեղից ես դուրս եկայ: Ինձ գրաւող թրքուհին մատով ցոյց էր տալիս վրաս: Ես ամաչելուց չըմօտեցայ, այլ նրանցից հեռու մի տեղ դալար խտտի վերայ կոթնեցի եւ սկսեցի երբեմն-երբեմն աչքիս տակով դիտել օրիորդներին: Անցաւ մի քանի բույժ, եւ նրանք վեր կացան ու սկսեցին զբօսնել համեմատ միջուկ մօտս: Յետոյ նստելով քիչ հեռու ինձնից՝ սկսեցին երգել խրճուղի մի տխուր, անվերջ տխուր սիրերգ: Գեղեցիկ թրքուհին սօլօ երգում էր, եւ միւսները շարունակում էին: Արեւի ճառագայթներն ուղիղ նրանց դէմքին էր ընկնում, եւ օրիորդ ձեռները ճակատին դնելով ամեն անգամ վերջացնելիս վրաս նայում եւ երբեմն ժպտում էր իբր թէ ինձնից աննկատելի: Չըկարողացայ այլ եւս համբերել եւ վեր կենալով տեղիցս՝ մօտեցայ նրանց: Նրանք լուռ ժպտալով նայում էին իրար դէմքի: Մօտեւալով գեղեցիկ օրիորդին՝ հարցրի նրանից.

— Քոյրի՛կ, կարելի՞ է խմանալ անուշադ: Նա ծիծաղեց, ծիծաղեցին եւ միւսները. վերջապէս նրանցից մինը պատասխանեց իմ կրկնակի հարցին. «Իրանա», միւսները կրկնեցին՝ «Իրանա», իսկ Իրանան դէմքը ծածկեց եւ մատերի արանքով նայում էր ինձ:

Ընկերուհիները վեր կենալով իրանց տեղերից՝ իրար ձեռքից բռնած գնացին քիչ հեռուում նստեցին, իսկ Իրանան մնաց մօտս մենակ եւ ամաչելով՝ կրկին ծածկեց երեսը: Ես խնդրեցի նրանից վերստին երգել ժայռի վրայ երգածները, նա ինձ պատասխանեց մի քնքոյշ, կըրքոտ եւ յուսալի ձայնով. «Ինչպէ՞ս երգեմ, է՛...» եւ ինքն էլ բարձրացաւ դնալու:

— Իրա՛նա, կարելի՞ է քեզ կրկին տեսնել եւ ո՞րտեղ...

— Սյտեղ, հինգ օրից յետոյ, պատասխանեց նա հեռանալով:

Օրիորդները հայտնելով իրանց դիպակէ կարճ վերնագրեւանները եւ չարամներում փաթաթելով՝ ուղեւորեցին դէպի քաղաք, որ շատ մօտ էր: Իրանան ամենից վերջն էր գնում եւ մի քանի անգամ յետ նայեց, իւրաքանչիւր անգամ սիրտս աւելի եւ աւելի մօտեցնելով իրան: Ես համարեա՛ թէ սիրում էի: Սուսջին անգամն էի տեսնում բարձր չըջանի թրքուհի չաղբայից դուրս եւ այն էլ այնպիսի հրապուրիչ մի աղջիկ: «Բայց ի՞նչ, մըտածում էի նրա գնալուց յետոյ, միթէ՞ նա կարող է հասկանալ ինձ, միթէ նա կարող է սիրել այն ուժով, որպէս ցանկալի է: Ո՛չ, աւելի կ'անբխտանամ, պէտք է խոյս տալ այսպիսի սիրուց, պէտք է արմատախիլ անել զեւ չըծաղկած»:

Տուն վերադառնալով չըկարողացայ մոռանալ այն դէմքը, որ մէջս բաւականին փոփոխութիւն մտցրեց աւնակընկալ կերպով. բոլոր ժամանակ միտքս նրան էի նւիրած, ամեն տեղ նա էր պատկերանում առաջիս: Անհամբերութեամբ սպասում էի հինգերորդ օրան, եւ ահա նա հասաւ: Քայլերս ուղղեցի դէպի լեռները: Եղանակը հրաշալի էր եւ զրանով մէջս յոյսեր ու ցանկութիւններ էր ծնեցնում. սակայն զրականապէս չէի կարող որոշել, թէ ինչն է ինձ ձգում իսկապէս դէպի Իրանան—արդեօք սէր՞ը... բայց միթէ՞ այդպիսի մի թոյլ զգացմունքը կարելի է սէր անւանել, քանի որ, եթէ Իրանայից զրկւէի, չէի էլ հողալ. գուցէ աչքերումս մի երկու կաթիլ անկոչ հեղուկ երեւար, եւ ամեն ինչ վերջանար զրանով, բայց



այդքանը օտարականի շիրմի վրայ էլ են թափում: Ուրե՞նք... չգիտեմ: Ձեի կարող գուշակել նոյնպէս, թէ ինչ է լինելու այդ բոլորի վերջը, միայն երբեմն անձնատուր էի լինում զանազան մտապատկերների եւ ինձ եօթերորդ երկնքումն էի զգում, բայց յանկարծ դուրս գալով մտաթափառումների հիւրասէր շրջանից՝ վրաս ժպտում էի՝ համարելով ինձ բնութիւնից խաբած մէկը, որ ամբողջ կեանքը ցնորարանելով է անցկացրել: «Չնչի՞ն մարդ...» անւանում էի ինքս ինձ, բայց մէկ էլ մտածելով՝ գրոհում էի, որ ես չեմ մեղաւորն, այլ բնութիւնը. ինչո՞ւ է ինձ աշխարհ գցել, ինչո՞ւ է կատակարար առաջ բերել իմ աննշան գոյութիւնը. կեանքը տեսած չ'լինէի, չէի էլ գրաւելի նրանով, կամ աւելի ճիշտն ասած, չէի էլ վախենալ մահից, որովհետեւ կեանքում ոչինչ չ'կայ գրաւիչ, այլ ամբողջը ծաղր է, դառնագին ծաղր... Անզգայ ժայռերն աւելի երջանիկ են մեզանից, թէկուզ նրանք եւս ենթարկւում են տարերքի հաճոյքներին, անտեղի ցասմունքին, երբ կէսդիշիւային պահուն անձրեւը խուլգուլ-չառաչում է նրանց կատարներին, ծեծում, մաշում, փշրում, եւ երբեմն ձմերային սառույցը կործանում է հիմնայատակ:

Երբ մօտեցայ այն բարձրութեան, ուր տեսել էի Իրանային, սիրտս սկսեց ուժգին բարախել. այդ եւս նրչան էր, որ օրիորդը վրաս մի ազդեցութիւն գործել է, եւ գուցէ չուտով անձնատուր կ'լինեմ իմ սիրած զգացմունքին. իսկ երջանկութիւն՝. է՛հ, նրա դռները վազուց էին գոցւած ինձ համար, նրան տեսդժւած էի համարում կատակարանից, ծաղրածւից, որին անկարող էի զիմել, որովհետեւ ստոր մութացկանութիւն կ'լինէր այդ իմ կողմից, եւ ինզիրքս կ'մնար «ձայն բարբառոյ յանապատի»...

Միշտ այդպէս է եղել, ուրեմն այդպէս էլ պիտի լինի, մտածում էի:

Իրանան, 'ի մեծ զարմանս իմ, մենւմենակ պռոկած էր նախկին օրւայ տեղը: Մօտեցայ. նա նստեց ժպտալով:

— Ինչ՞ու ես մենակ, Իրա՛նա, ուր են ընկերուհիներդ:

— Ընկերուհիներ չ'ունեմ, ես մենակ եկայ, մեր տունը քաղաքի ծայրումն է, ոչոք չընկատեց:

— Միթէ՞ չես վախենում այստեղ:

— Ինչո՞ւ պիտի վախենամ, քանի որ ինձ մօտ ես:

— Բայց միթէ՞ անձանօթի վրան կարելի է յոյս դնել:

— Ես ձանաչում եմ մէկին առաջին տեսքից՝ Նստի՛ր այստեղ:

Ես հնազանդւեցի եւ նստեցի նրա կողքին. նա վերցրաւ ձեռս եւ աչքերիս մէջ երկար ու խորը նայեց, կարծես մի բան էր կորցրել այնտեղ եւ ուզում էր գտնել: Ես ցնցւեցի, զիմանալ չըկարողացայ, սակայն պահեցի ինձ որքան կարելի է լուրջ: Նա զարմանում էր վրաս ինձ այդպիսի զիրք տալու համար: Աջ ձեռքով բռնելով մի ձեռս՝ ձախը գրաւ մէջքիս... Արդէն գայթակղւած էի... Օ՛, կին, ինչեր չես անիլ դու, մնում է միայն մի բան, որ անկարող ես, այն է՝ կշռադատել, խորհել... ուրիշ ոչինչ չկայ երկրիս երեսին, որ դու չըկատարես քո գաղտնի զօրութեամբ:— Իրանան գլուխը թեքեց զողացող ուսիս. չէի կարողանում այլ ես նայել նրան, աչքերըս յառել էի մի կէտի, կարծես ինքնամոռացման մէջ էի ընկնում: Որպէս զեփիւոք շոյում է տառապածի կուրծքը. եւ նրա տակ կանոց առած կեանքը սկսում է քիչ-քիչ եռալ վերստին, այնպէս էլ Իրանայի դէմքը չփւելով



դէմքիս, մէջս մի եռացում զգացի նախ սառն եւ ապա ջերմ. բայց զեվիւոը չ'ունի այն մեծ ոյժը, որպէս կախարդողի դէմքը. ահա այդ պատճառով չըկարողացայ ինձ հաշիւ տալ այդ բոպէին եւ նկատեցի, որ համբոյրները հոսում են չըթուենքներս վրայով: Մի անդօր մանուկ էի այդ ժամանակ՝ մոռացած ե՛ւ անցեալ ե՛ւ ապագայ:

Իրանան յագենարով յետ քաշւեց եւ ժպտաց:

—Ս՛հ, մոլորեցնո՞ղ դեւ, այս ի՞նչ արիւր, դու հարցրի՞ր իմ կամքը...:

—Կամքդ երեւաց վարմունքիդ մէջ, երբ բոլորովին անձնատուր եղար կրքին, հեռեւապէս ես մոլորեցնող չեմ, պատասխանեց նա եւ կրկին փարեւելով պարանոցով՝ այդ դրոթեան մէջ մնաց երկար ժամանակ: Ես ինձ թշուառ չէի զգում այլ եւս: Նրա դիւթական դէմքին ընկած մի քանի հայեացքներս ինձ համոզեցին վերջնականապէս, որ չեմ կարող այնուհետեւ նրանից անջատւել, յաւիտեան պիտի միանալ նրա հետ:

—Իրա նա, դու իմն ես, տուր ձեռք. համաձայն ես:

—Օ՛հ, հրեշտակս, եթէ համաձայն չ'լինէի, մի՞թէ՞ թոյլ կըտայի, որ քո չըթուենքը հարէր իմին. համաձայնութիւնս տւի այն բոպէին, երբ եկայ այստեղ: Բայց գիտե՞ս թէ որքան վտանգ կայ առաջներս, այդ բոլորին յաղթելը քեզից է կախած: Դու քրիստոնեայ ես, եւ այդքանը բաւական է, որ մերժէ հայրս ինձ քեզ տալու: Նա մի սպայ է, զինուորական գործում սիրան աւելացրած, չէ կարող հասկանալ մեր հոգին...:

—Ուրեմն ի՞նչ պէտք է անել:

—Պէտք է փախչել այստեղից...:

—!?

—Դու վախենո՞ւմ ես, համաձայն չե՞ս, թո՞յլ ես, աւելի վառ...:

—Ո՛չ, ես առանց քեզ անկարող եմ ապրել, վըճով՛ր, ինչպէս կուզես, եւ ամեն ինչ անելու պատրաստ եմ:

Երկուսս էլ դողում էինք: Վճիռը վերջնական էր, որոշեցինք երեկոյեան մթնով փախչել, անցնել Սրաքսով դէպի Պարսից աշխարհը:

Վերջին երկար գրկախառնութիւնից եւ համբոյրներից յետոյ ուղեւորեցինք դէպի քաղաք. Նա ցոյց տւաւ հեռից իրանց տունը եւ... բաժանւելու բոպէին սկսեց հեկեկալ վզովս փարած: Չիմացայ, թէ ինչ պատահեց նրա հետ, մնացել էի ապշած կանգնած, ինքն էլ չըբացատրեց, կամ աւելի ճիշտն ասել, չ'կարողացաւ բացատրել: Բայց որքա՞ն նա բարձրացաւ իմ աչքում այդ ժամանակ. չըզդեմ ինչու, բայց եւ այնպէս սկսեցի նրան համարել մի գերբնական էակ, որի եւ իմ մէջ ահագին տարբերութիւններ էի նկատում. նրա սէրը թւում էր անյողողոզ եւ անընկճելի, իսկ ես մի փոփոխամիտ արարած, որ զուրկ է յաւիտեան սիրելու ընդունակութիւնից: Սակայն նրա արցունքներն ամրապնդեցին զգացմունքըս, եւ երգեցի իմ մէջ՝ չ'ապրել այլ եւս ուրիշի համար եւ նւիրել նրան մի մշտնջենաւոր հաւատարմութեամբ:

—Վերջապէս Իրանան զաղարեց լալուց, եւ բաժանեցինք մեծ զժարութեամբ:

Հասաւ երեկոն: Շտապեցի դէպի Իրանան: Ճանապարհին տեղ-տեղ խմբւել էին մարդիկ եւ խօսում էին: Նրանցից մէկը տեսնելով որ դէպի թըքաց թաղն եմ գնում, դարձաւ ինձ:



—Ո՛ւր ես վազում, մեծ վտանգ է սպառնում թըր-  
քաց մասը գնացողներին:

—Ի՞նչո՞ւ, հարցրի կասկածով:

Եւ նա սկսեց պատմել, թէ մի աղջիկ քիչ առաջ  
ուզում է դուրս գնալ, հայրը հարցնում է ուր գնալը,  
նա չէ պատասխանում, այլ ուզում է մի կերպ փախչել.  
հայրը սուրը խրում է աղջկայ կուրծքն ու տապալում:  
Աղջիկը մի քանի րոպէ կենդանի մնալով՝ զառանցանքի  
մէջ յայտնում է, որ սիրում է մի ինչ որ հայի եւ կա-  
մենում է նրա հետ փախչել, ու մեռնում է:

Ես փղձկացի իսկոյն, զգալով, որ Իրանան կորաւ  
ինձ համար եւ այն էլ այնպիսի չարաչար մահով:

—Ինչո՞ւ ես լալիս, եղբայր, այդքան վախկո՞տ ես,  
քեզ ի՞նչ են անելու, մենք ինչո՞ւ չենք լալիս... թէ՞...:

Ես հեռացայ: Չգիտեմ՝ թէ ինչպէս հասայ տուն,  
ամբողջ գիշերը զառանցում էի, եւ արցունքը հոսում էր  
անընդհատ ուռած աչքերիցս: Առաւօտեան ուշքի գալով՝  
մտածեցի մի համարձակ գործ անել. գնալ թուրքերի  
թաղը, իմանալ բանի էութիւնը, հարցնել՝ թէ երբ են  
հողին յանձնում Իրանային եւ վերջին անգամ տեսնել  
նրա կենազուրդ աչքերը, թէկուզ նոյն իսկ ինձ եւս նիւ-  
թեն գերեզման: Ո՞վ գիտէ, մտածում էի կասկածելով,  
զուցէ սպանուածն Իրանան չէ մինչեւ անգամ... Յնո՞րք,  
որ միայն խաղում ես բանականութեան հետ եւ վերջն  
ես ցոյց տալիս քո խարուսիկ պատկերը... Կարծես քիչ  
էին ընութեան ծիծաղ պատճառող գործիքները, դու էլ  
աշխարհ մտար: Դու ոչ սրբութիւն գիտես, ոչ ինայել,  
ահա այդ պատճառով ձանձրալի ես: Քանի՞-քանի ան-  
գամ քեզանով եմ չնչել, քեզանով եմ զգացել, բայց միշտ  
խարել եմ: Այն աստիճանի ես հասցրել ինձ, որ այժմ

բոլորովին կորած է հաւատս, մինչեւ անգամ քիչ է մը-  
նում, որ աչքովս տեսածին էլ չ'հաւատամ: Ինչ որ ցան-  
կանում եմ, համոզւած եմ, որ անիրագործելի է, եւ եթէ  
երբեմն իրագործելու ետեւից եմ ընկնում, առանց կաս-  
կածի չէ լինում այդ:

Կէսօրւան դէմ էր: Մտայ թուրքերի թաղն ա՛ն ու  
զողով: Փողոցներում քիչ թափառելով հասայ Իրանայի  
տան մօտ: Պատահելով մի ծերի՝ հարցրի նրանից, թէ  
ով է սպանուածը. բանից երեւաց, որ Իրանան, է եւ քիչ  
յետոյ կ'տանեն թաղելու: Վազեցի դէպի նրանց գերեզ-  
մանատունը, որպէս խելագար: Թէկուզ ինձ նահատակեն,  
մտածում էի, պէտք է յարգեմ նրա դիակն իմ արցուն-  
քով, չէ՞ որ ես եմ նրա մահւան պատճառն, առանց նը-  
րան էլ ինչի՞ եմ պէտք. պիտի խեղճ կեանքս քարչեմ  
յաւէրժական ցաւերի մէջ եւ ընդ միշտ զուրկ մնամ հան-  
գստից, զգալով՝ որ վախկոտ, թուլամարմին արարած եմ,  
մի շաղակրատ էակ, որ շատ բան խոստանալ գիտէ, բայց  
կատարել—ոչինչ»:

Հեռւից երեւում էր հանդիսաւոր գնացքը, որ դէպի  
իմ կողմն էր գալիս: Մոռացել էի ինձ, կեանքս իմ աչ-  
քում կորցրել էր իր առաջւայ գինը, եւ պատրաստ էի  
մեռնելու, միայն թէ կարողանայի ազատ կերպով արտա-  
յայտել այն, ինչ որ թագնւած էր սրտիս խորքում:

Ահա՛ նրա դազազը, բերին, փորած գերեզմանի ա-  
փին վայր դրին: Իսկ ձեւ... թշտաս, որ մի քանի վայր-  
կեան առաջ կեանքս իմը չէի համարում, այդ ժամանակ  
սիրտ չէի անում մօտ գնալ, արցունք թափել եւ թաղ-  
ւել նրա հետ: Կարծես մի գեւ շղթայել էր ինձ, կապել  
գեամից, բեւեռել, տեղիցս շարժւել չէի կարողանում:  
հեռւից նայում էի, թէ որպէս զրին գերեզմանում, որ-



պէս սկսեցին հողի տակ ծածկել այն չքնաղ իրանը, որ մի օր առաջ հանդուժ էր գրկիւ մէջ, բայց չէի իշի ում մօտենալ եւ փոքրոգութեամբ թողեցի այդ վայրն՝ արցունքն աչքերումս խեղդած, սիրտս հրդեհած եւ հեռացայ որպէս Ֆուզան, որ մասնել էր իր սքանչելի Տիրոջ:

Սյրպէս է մարդը. նա գիտէ խոստանալ, բայց բոլորը կատարելու անձեռնհաս է. նա մի մեղկ արարած է, որ ինքն իր համար թոյն է պատրաստում, որպէս զի վախճանն աւելի փոթորկալի լինի, որպէս զի նոյն իսկ անչչունջ գերեզմանում որդերն անդամ հանգիստ չ'տան: Փոքրոգութիւնը նրա գործնական կողմն է, նրա յատկանիշն է, որ խօսքի ժամանակ չէ երեւում, այլ միայն գործի: Բայց միթէ՞ այդպիսի զէպքերում կարող է նա հանգլստ ունենալ, տեսնելով որ ետեւն է թողնում իր նման եւ գուցէ քիչ էլ ազնիւ մարդկանց հողակոյտեր, որոնց գոյանալու պատճառն ինքն է եղել, զգալով որ մարդասպանութիւն է գործել, բայց ինքը զեռ կենդանի է. — դժւար թէ...

Արթուն խղճմտանքս կըյօշոտէր անշուշտ սիրտս, ես կըխելագարւէի, եթէ այս բոլորը երազ չ'լինէր:



415  
511



10341

2013



